

կրնաս գնա տանջել եւ սպաննել, այդ քու եւ քեզ նման գազանաց գործն է եւ բնութիւն. բայց նախատել՝ սրտիդ անարգութիւնը եւ մտքիդ տկարութիւնը յայտնել է:

— Դեռ այդ վիճակիդ մէջ զիս նախատել կը համարձակիս եւ չես իմանար թէ ես ի՞նչ կրնամ ընել: Ես քեզ պէս անօրէնի մը կրնամ ներել, բայց միմիայն պայման ունի իմ ներողութիւնս ուրացիր քու հաւատքդ, ընդունէ՛ ճշմարիտ կրօնքը, ընդունէ՛ փառք, պատիւ եւ մեծութիւն, ճանչէ աստուծոյ կարողութիւնը հոն, ուր կայ զօրութիւն, տե՛ս թէ ուսկից ուր կը տարածի մեր Մարգարէին իշխանութիւնը, եւ ամէն դիմադրութիւն անապատի խռիւ է դորայ առաջ: Օ՛ն, մտիկ ըրէ իմ խօսքերս, զոջա՛, եւ ես կը ներեմ քեզ ու կը շնորհեմ ոչ միայն կեանք այլ եւ մեծութիւն: Մտածէ, որ դու քու այս վիճակիդ մէջ եղեռնաւոր մը իմ աչաց առջեւ կը կենաս ներկուած արաբաց արեամբ, եւ քու ապստամբ սուրդ դեռ նոր տասներկու հոգիէ աւելի զոհ կտրած է իմ զօրքերես. ապստամբին պատիժը մահ է, եւ ես քեզի կը շնորհեմ քու կեանքդ:

Յեզնական ծիծաղով մը միայն պատասխանեց Յովնան այս խօսքերուն, եւ երբ Բուղայ այս ծիծաղին վրայ շփոթած իւր փոքրիկ աչքերը կը ջանար մեծ-մեծ բանալու, Յովնան դարձաւ այն մարդուն, որ Բուղայի մօտ նստած եղէզը ձեռքը շարունակ կը գրեր եղած խօսակցութեանց համառօտութիւնը.

— Միրզա՛ Յասան, դու գրուցէ՛ միթէ ես քու կեանքդ չե՞մ շնորհած,— ըսաւ շեշտակի ձայնով:

Իսկ նա շուարած, աչքերը բացած երեսը կը նայեր, եւ յանկարծ մտաբերելով նետեց եղէզը՝ ցատկեց տեղաց եւ ետ-ետ քաշուելով աղաղակեց.

— Այո՛, այո՛, աւագակ, երբ գիշերը հլլաթ իմ տունս կոխեցիր, իմ ծառայներս կապեցիր, սպաննեցի՛ր, իմ թելս կտորեցիր, ինչպէ՛ս կարելի է չիշել. կրկնապատիկ՝ հազարապատիկ մահապարտ ես դու: